ԿԱՐԾԻՔ

(պաշտոնական ընդդիմախոսի)

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը հայցող Իրինա Արթուրի Քարամյանի «Տեղեկատվական-հաղորդակցային նորագույն տեխնոլոգիաների կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում քաղաքական կառավարման արդիականացման համատեքստում» թեմայով ատենախոսության վերաբերյալ:

Հրապարակային պաշտպանությանը ներկայացված «Տեղեկատվական-հաղորդակցային նորագույն տեխնոլոգիաների կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում քաղաքական կառավարման արդիականացման համատեքստում» թեմայով ատենախոսությունն արդիական գիտահետազոտական աշխատանք է, որի կարևորությունը անհերքելի է և հիմնավորված:

Ատենախոսությունը նվիրված է տեսական և կիրառական առումներով արժեքավոր խնդրին՝ քաղաքական կառավարման համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաների և թվային հաղորդակցության դերի վերլուծությանը, ինչպես նաև վերջիններիս ազդեցության ուսումնասիրությանը հանրային գիտակցության և քաղաքական գործընթացների ձևավորման վրա՝ քաղաքական դաշտի ժամանակակից փոխակերպումների համատեքստում, այդ թվում նաև՝ Հայաստանի Հանրապետությունում:

Քաղաքական կառավարման համակարգում թվայնացումը գնալով ավելի մեծ թափ է առնում: Տեղեկատվական տեխնոլոգիաները, որպես կառավարման կարևորագույն գործիք, կիրառվում են բարձրացնելու պետության գործառույթների իրականացման արդյունավետությունը:

Հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է թվայնացման ազդեցության տակ քաղաքական ոլորտում տեղի ունեցող խորքային փոփոխություններով, սոցիալական ցանցերի զարգացմամբ, քաղաքական հաղորդակցության մեխանիզմների վերափոխմամբ, ինչպես նաև սոցիալական գործընթացների կառավարման գործում տեղեկատվական տեխնոլոգիաների

դերակատարության էական աճով: Հեղինակը իրավամբ մատնանշում է, որ թվային միջավայրը դառնում է ոչ միայն տեղեկատվության փոխանցման ուղի, այլև քաղաքական ազդեցության, հասարակական կարծիքի ձևավորման և քաղաքացիների մոբիլիզացիայի ինքնուրույն գործոն:

Ատենախոսության առաջին՝ **«Քաղաքական կառավարման մեջ հաղորդակցման գործընթացների ուսումնասիրության տեսական և մեթոդական հիմքերը»** վերտառությամբ գլուխը, նվիրված է քաղաքական կառավարման մեջ հաղորդակցման գործընթացների տեսական և մեթոդական հիմքերի վերլուծությանը: Այն ուսումնասիրում է տեղեկատվական տեխնոլոգիաների էությունն ու դասակարգումը քաղաքականության մեջ, դրանց դերը քաղաքական հաղորդակցության, կառավարման և ընտրական գործընթացների շրջանակում: Բացահայտվում է տեղեկատվական հասարակության ձևավորման տեսական հիմքը՝ շեշտադրելով թվային տեխնոլոգիաների, գիտելիքի և հաղորդակցային ենթակառուցվածքների աճող նշանակությունը ժամանակակից սոցիալ-քաղաքական զարգացման մեջ: Հիմնավորվում է, որ տեղեկատվական հասարակության պայմաններում հաղորդակցման տեխնոլոգիաները վերածվում են քաղաքական կառավարման համակարգաստեղծ գործոնի՝ ազդելով իշխանության ձևավորման, լեգիտիմացման և քաղաքական գործընթացների արդյունավետ իրականացման վրա:

Երկրորդ՝ **«Քաղաքական կառավարման մեջ հանրային գիտակցության վրա հաղորդակցական ազդեցության թվային գործիքները»** գլուխը նվիրված է քաղաքական կառավարման համակարգում հանրային գիտակցության վրա հաղորդակցական ազդեցության թվային գործիքների վերլուծությանը: Քննարկվում է էլեկտրոնային ժողովրդավարությունը՝ որպես քաղաքական գործընթացների թվայնացման կարևոր դրսևորում, ինչպես նաև դ րա կիրառման հնարավորություններն ու սահմանափակումները՝ կիբեռանվտանգության, իրավական կարգավորման և ինստիտուցիոնալ պատրաստվածության համատեքստում: Միաժամանակ ուսումնասիրվում են հանրային գիտակցության ձևավորմանը և փոխակերպմանը ուղղված թվային տեխնոլոգիաները, մասնավորապես՝ սոցիալական ցանցերի, ֆրեյմինգի և մանիպուլյատիվ

մեխանիզմների կիրառումը, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ ժամանակակից քաղաքական կառավարման մեջ հաղորդակցական ազդեցությունը ձեռք է բերում համակարգաստեղծ նշանակություն:

Աշխատանքի երրորդ՝ **«Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը Հայաստանի քաղաքական գործընթացներում»** գլխում հեղինակը անդրադառնում է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկություններին Հայաստանի քաղաքական գործընթացներում՝ ներկայացնելով պետական կառավարման թվայնացման հիմնական ուղղություններն ու դրանց իրականացման ընթացքը: Հետազոտության մեջ հիմնավորված կերպով բացահայտվում են ինչպես թվային վերափոխման ձեռքբերումները, այնպես էլ առկա խնդիրներն ու սահմանափակումները՝ հատկապես ինստիտուցիոնալ, կադրային ապահովման և կիբեռանվտանգության ոլորտներում: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում տեղեկատվական տեխնոլոգիաների դերին քաղաքական գործընթացների ճգնաժամային կառավարման համատեքստում՝ շեշտադրելով դրանց նշանակությունը արդյունավետ հաղորդակցության, հանրային կայունության և պետական դիմադրողականության ապահովման գործում: Միևնույն ժամանակ, սոցիալական ցանցերի ազդեցության վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել դրանց երկակի բնույթը՝ որպես քաղաքական հաղորդակցության և մոբիլիզացիայի արդյունավետ գործիք, միաժամանակ արձանագրելով դրանց հետ կապված տեղեկատվական ռիսկերը և կարգավորման անհրաժեշտությունը:

Աշխատանքն աչքի է ընկնում գիտական մշակվածությամբ. դիտարկվել են հիմնական հասկացությունների տեսական հիմքերը, տարբեր մոտեցումները:

Աշխատանքի շրջանակում իրականացվել է օգտագործված գրականության համափարպակ ուսումնասիրություն՝ ուշադրություն դարձնելով թեմային առնչվող հայեցակարգային ու ռազմավարական փաստաթղթերին, գիտական աշխատություններին, հայաստանյան և միջազգային պաշտոնական կայք-էջերում ներկայացված քանական տվյալներին, որոնք հիմք են հանդիսացել կատարած եզրահանգումների համար:

Աշխատանքն առանձնանում է տրամաբանական կառուցվածքով, բովանդակային հաջորդկանությամբ և մեթոդաբանական ամբողջականությամբ:

Այնուհանդերձ, հարկ ենք համարում առանձնացնել մի շարք դիտարկումներ, մասնավորապես՝

1. Ատենախոսության մի շարք դրույթներում ներկայացված տեսական ընդհանրացումները ցանկալի կլիներ առավել խորացնել՝ դրանք համալրելով թվային քաղաքական կառավարման ոլորտում միջազգային փորձի ավելի ընդլայնված և համեմատական վերլուծությամբ, ինչը առավել կբարձրացներ հետազոտության արժեքը: Օրինակ, թվային քաղաքական կառավարման իրավական կարգավորման նշանակության մասին (էջ 80), ինչպես նաև քաղաքական որոշումների կայացման գործընթացում թվային տեխնոլոգիաների, մասնավորապես, Big Data-ի ընտրական գործընթացներում կիրառման արդյունավետության մասին (էջ 64, 73) դրույթները հնարավոր էր զարգացնել մի շարք եվրոպական երկրների փորձի համեմատական վերլուծությամբ:
2. Չնայած այն հանգամանքին, որ հետազոտության էմպիրիկ բազան ընդհանուր առմամբ բավարար է դրված նպատակների իրագործման համար, հետագա ուսումնասիրությունների շրջանակում նպատակահարմար կլիներ այն ընդլայնել՝ ներառելով լրացուցիչ քանակական տվյալներ, ինչպես նաև սոցիոլոգիական հարցումների և էմպիրիկ ուսումնասիրությունների արդյունքներ, ինչը հնարավորություն կտար առավել ամբողջական կերպով հիմնավորել ներկայացված եզրահանգումները:
3. Աշխատության 3-րդ գլխում, որը նվիրված է քաղաքական գործընթացներում տեղեկատվական տեխնոլոգիաների Հայաստանի փորձի ուսումնասիրությանը, ցանկալի կլիներ անդրադառնալ նաև հայ հետազոտողների աշխատություններին:
4. Ատենախոսության մեջ առկա են որոշակի բովանդակային համընկնումներ: Մասնավորապես էջ 22, 1-ին, 2-րդ պարբերություններ և էջ 32, 1-ին պարբերությունը:
5. Ուսումնասիրելով ժամանակակից կառավարման համակարգերում տեղեկատվական տեխնոլոգիաների՝ մասնավորապես թվայնացման մոդելների կիրառման առանձնահատկությունները Էստոնիայում և Ղազախստանում, հեղինակը հստակ չի մատնանշում, թե որքանով է նշված երկրների փորձը փոխառելի Հայաստանի համար: Հետաքրքրական կլիներ դիտարկել, օրինակ, էլեկտրոնային քվերկության

համակարգի առավել արդյունավետ տարբերակի կիրառման հնարավորությունը մեր երկրում:

Այնուամենայնիվ, նշված դիտողությունները չեն նսեմացնում հեղինակի կատարված աշխատանքի գիտական և կիրառական արժեքը: Հեղինակին հաջողվել է արտացոլել ատենախոսության հիմնական դրույթները հրապարակած գիտական հոդվածներում:

Ընդհանուր առմամբ, սույն հետազոտությունը ինքնուրույն, ավարտված գիտական աշխատանք է, առանձնանում է գիտական նորույթով, գործնական նշանակությամբ:

Վերոնշյալից ելնելով՝ ինչպես նաև հաշվի առնելով թեմայի արդիականությունը, եզրահանգումների հիմնավորվածությունը կարելի է եզրակացնել, որ Իրինա Արթուրի Քարամյանի «Տեղեկատվական-հաղորդակցային նորագույն տեխնոլոգիաների կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում քաղաքական կառավարման արդիականացման համատեքստում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Երևանի պետական համալսարանի
Միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի Քաղաքագիտության
ամբիոնի պրոֆեսոր, ք.գ.դ.՝ Ա.Փ. Ենգոյան

Քաղաքական գիտությունների դոկտոր Ա.Փ.Ենգոյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Երևանի պետական համալսարանի
գիտական քարտուղար
բ.գ.թ., դոցենտ՝ Մ.Վ. Հովհաննիսյան

02.02.26թ.